ԱՐՑԱԽԻՆ ԱՆՀՆԱՐ Է ԸՆԿԾԵԼ

Արցախի հայ բնակչությունը վրդովմունքով ընդունեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրադրության նորմալացման միջոցառումների մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը: Վաղ առավոտվանից ստեփանակերտցիները խումբ-խումբ հավաքվել էին քաղաքի տարբեր անկյուններում, բուռն կերպով քննարկում էին ընդունված որոշումը, որը ուղղակիորեն վերաբերում է երկրամասի տեղաբնիկների ապագային: Բոլորն էլ այն միահամուռ կարծիքին են, որ որոշումը ոչ միայն բացարձակապես չի համապատասխանում Արցախի ժողովրդի շահերին, այլև սպառնալիքի տակ է դնում նրա բուն գոյությունը:

— Ոչ մի ղարաբաղցի չէր կարող սպասել այդքան միտումնավոր որոշում,— Արմենպրեսի թղթակցին ասաց ԼՂԻՄ-ի ագրոարդի նախագահ Լեռնարդ Պետրոսյանը:— Ինձ թվում է, որ այդ որոշումը այդպես էլ թղթի վրա կմնա, քանզի մեր ժողովուրդը չի համաձայնի դրան: Կենտրոնական իշխանությունները փաստորեն կրկին բռնեցին Ղարաբաղի հարցի արդարացի լուծումը ձգձգելու ուղին, ջանալով ուրիշ լույսով ներկայացնել ԼՂԻՄ-ի հայ բնակչության օրինական պահանջները: Եվ զարմանք, և տարակուսանք է առաջացնում այն փաստը, որ Ադրբեջանի կառավարությունը, որը մինչև հիմա կենտրոնական իշխանություններին համառորեն ապացուցում էր, թե Հայաստանի և մարզի շրջափակման մասին խոսք անգամ չի կարող լինել, հիմա պարտավորվում է վերացնել այդ շրջափակումը: Իսկ չէ որ Արցախը, կարելի է ասել, համարյա 70 տարի պաշարման մեջ է: Եվ, ցավոք, կենտրոնը այդ առթիվ ոչ մի քաղաքական գնահատական չի տալիս: Ինձ՝ որպես մարզխորհրդի դեպուտատի, հնարավոր չի թվում նաև կառավարման մարզային մարմինների վերականգնումը:

— Երեկվա որոշումը մեռելածին է,— ասաց ԼՂԻՄ-ի պլանային տնտեսագիտական գլխավոր վարչության պետ, տնտեսական գիտությունների թեկնածու Սեդրակ Սեդրակյանը:— Հենց այն փաստը, որ այդ փաստաթուղթն ընդունեցին այն բանից հետո, երբ ի նշան բողոքի դահլիճից հեռացել էին Հայաստանի և ԼՂԻՄ-ի պառլամենտականները, ոչ այլ ինչ է, եթե ոչ ուղղակի վիրավորանք հայ ժողովրդի հասցեին: Կարծում եմ, որ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պետք է որոշակի դիրք բռնեն այդ հարցի առթիվ և այն ներկայացնեն ամբողջ աշխարհին: Ես նաև չեմ հավատում մարզի ինքնակառավարման, ինքնաֆինանսավորման իրականացմանը, քանի որ այդ գեղեցիկ խոսքերը ամեն մի իմաստ կորցնում են առանց գլխավոր պայմանի՝ ազգի ինքնորոշման:

Այսօր, նոյեմբերի 29-ին մարզի աշխատավորական կոլեկտիվներում, քաղաքներում ու շրջաններում տեղի ունեցան բողոքի միտինգներ: Հոնտորները զայրալից խոսքեր էին ասում Ղարաբաղի պրոբլեմի անարդար լուծման մասին: Նրանք ընդգծում էին, որ երկրի Գերագույն խորհրդի որոշումը բացահայտորեն արտահայտված կայսրությանական բնույթ է կրում, իր բովանդակությամբ ուղղակի զուգադիպելով Ադրբեջանի ժողովրդական ճակատի պահանջներին: Ավելի քան ծիծաղելի է Ադրբեջանական ԽՍՀ-ի՝ այն հանրապետության Գերագույն խորհրդին տրված հանձնարարականը, որի տարածքում կազմակերպվեց «սումգայիթը», ապահովելու Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ապահովության գործնական երաշխիքներ: Սակայն չնայած բոլոր կամայական որոշումներին, Արցախն արել է իր ընտրությունը և արել է մեկընդմիշտ:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի թղթ.)
Ստեփանակերտ